

բերանը, որ խափէ, երեխայի լացը առժամանակ մի դադարեցնէ. երեխայն այդ շոր կաշի դարձած ստեանց մէջ նիւթ չք գտնելով նուազկոտ ձայն մի կարճակէր, մայրն ևս ի խորոց ան կը քաշէր, սակայն դեռ յուսոյ սեղանը զինք կուրախացնէր, որով ժիր կը քայլէր, կը թռչեր:

Այդ «անխ»ի արժէքը խղճահար մի անձնաւորութիւն պէտք էր որ կշռէր: Աս գտաւ իւր որոնածը, մխիթարուած դարձաւ սակաւ ինչ հասակաւոր որդւոցը մօտ, զորս մի գոմի ցուրտ և մութ անկիւն թոյլ տուած էր:

Ար յիշէք անշուշտ թէ անագորոյն հիւանդութիւնը որպէս միսած է իւր անգութ ճիրաններն ի սիրտս գաղթականաց, որպէս տապալած է գետին բաղդի դժնդակ հարուածը, որպէս արմատախիլ արած է ընտանիքին մեծը, մատղաշ մանկանց հայրն կամ մայրը. երեխայոց հասակաւորը որպէս դալկահար անկողնոյ կը ծառայէ. փոքրիկներն անօգնական, որպէս անփետուր թռչնիկ բերաններն բաց խուփ անելով՝ գթութիւն մի՝ կտիկ մի կը խնդրեն. իսկ 'Նուք, Հայրիկդ Հայոց, Ձեր գթութեամբ լի ձեռներն հեռուն ևս տարածեցիք, օգնեցիք այն անփետուր ձագուկներուն, գիտ-